Ազգ
Azg
16 ՕԳՈՍՏՈՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 139(4991)
ISSN: 1829-1651

# ... Եթե բանական լուծումներ չգտնվեն

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Այս տարվա Բաքվի շոգը նախադեպը չունի: Ստվերում օդի ջերմաստիճանն անցնում է 40-ից: Դե իսկ Իլհամ Ալիեւի աշխատակազմի գլխավոր «նյուզմեյքեր» Նովրուզ Մամեդովը ստիպված է նստել նախագահականում եւ հարկ եղած դեպքում պատասխանել լրագրողների հարցերին: Դրանք, ինչպես միշտ, ձանձրալի են, «կացնային»: Նորությունը, թերեւս, սիրիահայերին Արցախում «վերաբնակեցնելու» մասին աղմուկն է, որ Բաքվում պաշտոնյաների վրա կարծես ավելի վատ է ազդել, քան ապշերոնյան տապը: Կամ էլ, ընդհակառակը, Իլհամ Ալիեւի աշխատակազմն այնքան է արեւահարվել, որ կորցրել է ողջախոհության վերջին փշրանքները:

Այսպես, պատասխանելով սիրիահայության մասին հարցին՝ Նովրուզ Մամեդովը դարձյալ մի տաղտկալի «դասախոսություն» է կարդում, որ «հայերը միշտ էլ մի երկրից մյուսն են տեղափոխվել, դա նրանց արյան մեջ է»: Այնուհետեւ թվարկում է աշխարհի երկրները, որտեղ հայեր են ապրում, եւ վստահեցնում, որ Սիրիայից «ոչ ոք Լեռնային Ղարաբաղ չի գա, քանի որ նրանք նախընտրում են հարուստ երկրները»:

Մինչ բուն խնդրին անդրադառնալը հարկ ենք համարում Նովրուզ Մամեդովին նկատել տալ, որ 1991-ից ի վեր Ադրբեջանը լքել է 4 մլն «հայրենասեր»: Այսօր ադրբեջանցիները «սփյուռք» ունեն ե՛ւ Միացյալ Նահանգներում, ե՛ւ եվրոպական երկրներում: Ռուսաստանի մասին խոսել իսկ չարժե. միայն Սանկտ Պետերբուրգում ադրբեջանցիների թիվն անցնում է 300 000-ի սահմանը: Գրեթե նույնքան է Ուկրաինայի ադրբեջանական համայնքը: Իսկ Մոսկվայում ադրբեջանցի «հայրենասերները» ավելի քան 2 մլն են:

Սույն միջարկումն արվեց ի պատասխան Մամեդովի հարցադրման. «Եթե հայերն իրենց հայրենիքը սիրում են, ապա ինչո՞ւ են գերադասում այնտեղ չապրել»:

Տես էջ 2

# «Արաբական գարունը» ի չիք դարձրեց Թուրքիայի տարածաշրջանային գերտերության հավակնությունները

*Նա, որպես Արեւմուտքի հանձնակատար, արդեն չէր համապատասխանում այդ դերին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Տարածաշրջանային գերտերություն դառնալու Թուրքիայի երազանքը տասնամյակների վաղեմություն ունի: Նույնը կարելի է ասել նրա հավակնությունների մասին, որոնք առավել ակնառու դարձան վերջին տասնամյակում, երբ Թուրքիայում միանձնյա սկսեց իշխել վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը՝ որդեգրելով տարածաշրջանի երկրների հետ մերձեցման քաղաքականությունը բոլոր հարեւանների հետ առկա խնդիրները «զրոյականացնելու» դիրքորոշման շրջանակներում:

Սակայն անկախ երազանքի վաղեմությունից եւ հավակնության հետեւողականությունից, գերտերություն դառնալը կախված է որոշակի չափանիշներից: Հավակնող երկիրը նախ պետք է ունենա էներգետիկ անկախություն, ապա զարգացած ռազմարդյունաբերություն, ինչպես նաեւ լինի միջուկային տերություն: Իսկ տարածաշրջանային գերտերություն դառնալու համար անհրաժեշտ է, որ տվյալ պետությունը լինի առանցքային դերակատար, առաջնորդի տարածաշրջանի երկրներին եւ որպես առաջնորդ ճանաչվի տարածաշրջանում:

Թուրքիան էներգետիկ անկախություն չունի, ռազմարդյունաբերություն՝ նմանապես, ոչ էլ միջուկային տերություն է: Ինչ վերաբերում է նրա առաջնորդությանը, ապա այդ հարցին «Ռադիկալի» հուլիսի 8-ի համարում անդրադարձել էր պրոֆ. Բասքըն Օրանը: Ահա թե ինչ է գրում. «Տարածաշրջանային ուժ լինելու գլխավոր նախապայմանը «տվյալ տարածաշրջանում որպես առաջնորդող երկիր» ճանաչվելն է: Տարածաշրջանում կան 3 դերակատար՝ պետություններ, դիմադրության շարժումներ եւ արաբական քաղաքացիական հասարակություն: Նրանք ցանկանո՞ւմ են, որ Թուրքիան դառնա տարածաշրջանային ուժ: Վարչապետ Էրդողանը արաբական իրականության մեջ ամենաժողովրդական գործիչն էր, իսկ մենք՝ մոդել Մերձավոր Արեւելքում: Շատ բարի: Բայց արաբները ինչպե՞ս են մոտենում սրան»:

Մինչ իր իսկ բարձրացրած հարցին պատասխանելը, Օրանը նշում է, որ նախքան «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունը իրավիճակը տարածաշրջանում տհաճ էր Թուրքիայի համար: Հիրավի, արաբ ժողովուրդները դարեր շարունակ շահագործվել էին օսմանյան բռնատիրության տակ: Գալով քեմալականների ժամանակակից Թուրքիային, ապա նա երկար ժամանակ հեռու մնաց տարածաշրջանի քաղաքական զարգացումներից: Երբ 1949-ին վերադարձավ, ապա ճանաչեց Իսրայելին: Ավելին, 1955-ին Անգլիայի եւ ԱՄՆ-ի հետ նա կազմավորեց տխրահռչակ Բաղդադի պակտը:

Թեեւ Թուրքիան 1967-ի եւ 1973-ի արաբա-իսրայելական պատերազմների ժամանակ թույլ չտվեց Իսրայելին օգտվելու «Ինջիռլիքի» ռազմաբազայից, 1969-ին միացավ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությանը, 1979-ին արտոնեց Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը ներկայացուցչություն բացել Անկարայում, եւ արաբները չմոռացան այս ամենը, սակայն, ինչպես Օրանն է վկայում, գիտեին նաեւ, որ Թուրքիան դրանով փորձում է Կիպրոսի հարցում վայելել արաբական երկրների բարեհաճ վերաբերմունքն ու արտոնյալ գներով նավթ ստանալ:

Տես էջ 5

# Էթիկայի հանձնաժողովը գուցե մի ճըռթ փոխի մթնոլորտը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Հայտնի է, որ այս՝ աշնանային նստաշրջանից 5-րդ գումարման Ազգային ժողովում գործելու է էթիկայի հանձնաժողովը: Չնայած այդ հանձնաժողովի հետ կապված մեծ հույսեր պետք չէ կապել, քանի որ նրա անդամները նույն ազգային ժողովականներն են, այսինքն՝ պատգամավորները քննարկելու են այլ պատգամավորների վարքը ու հայկական իրողություններով նրանք չեն կարող վեր լինել փոքրիկ երկրի ծանոթ բարեկամ-շահեր եռանկյունուց, ու հենց իրենց՝ 130-ի շրջանակից, սակայն, այնուամենայնիվ, այդպիսի հանձնաժողովի գոյությունը մի փոքր կարող է ձգել մեր տարակազմ Ազգային ժողովի ամենաէկզոտիկ եւ օդիոզ պատգամավորներին եւ նրանց, որոնք իրենց ամենակարողներից են համարել մինչեւ այժմ:

Տես էջ 3

# Հայ խաղաղապահները մեկնեցին Գերմանիա

Համաձայն Հայաստանի ՊՆ-ի եւ Եվրոպայում ԱՄՆ ցամաքային ուժերի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի՝ երեկ 116 հայ խաղաղապահներ մեկնեցին Գերմանիա՝ սովորելու եւ վերապատրաստվելու, որից հետո կմեկնեն Կոսովոյի Ուրոշեվաց քաղաքի մերձակայքում գտնվող ամերիկյան «Բոնդսթիլ» ռազմակայան, որտեղ կծառայեն վեցամսյա ռոտացիոն հիմունքներով: Կոսովոյում հայ խաղաղապահները պատասխանատու են լինելու պարեկային ծառայության իրականացման, անցակետերի անվտանգության, անկարգությունների, ամբոխների կառավարման ու պահակախմբերի ուղեկցման համար: Իսկ նախքան սա՝ Գերմանիայում հայ խաղաղապահները օգոստոսի 16-ից սեպտեմբերի 4-ը ԱՄՆ զինված ուժերի ուսումնավարժական կենտրոնում կմասնակցեն «Կոսովոյի ուժեր» ծրագրի շրջանակներում անցկացվող բազմազգ զորավարժություններին, որոնց մասնակցում են նաեւ ստորաբաժանումներ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ռումինիայի, Սլովենիայի եւ Ուկրաինայի զինված ուժերից: Օգոստոսի 28-ին այս զորավարժություններին դիտորդի կարգով հետեւելու կմեկնի Հայաստանի ԶՈւ-ի բարձրաստիճան պատվիրակությունը:

# Վիբրատորը կանխատեսում է երկրաշարժերը

Ռուսաստանի ԳԱ Սիբիրի բաժանմունքի Երկրաֆիզիկական ծառայության Ալթայ-Սայանների մասնաճյուղի աշխատակիցները ստեղծել են մի սարք, որը կարող է կանխատեսել ստորգետնյա ցնցումները: Սեյսմավտանգ շրջանների շինարարների համար սարքը պարզապես անփոխարինելի է: Երկրաբանները կարծում են, որ սարքը կարելի է օգտագործել նաեւ օգտակար հանածոների որոնման նպատակով, նշում է Ռիա գործակալությունը:

Արտաքուստ պարզ կայանքը կոչվում է վիբրատոր եւ նոր նվաճում է երկրակեղեւի հետազոտության մեջ: Սարքը կանխատեսում է ստորգետնյա ցնցումները, քանզի «զգում է» երկրաշարժից առաջ հողի մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Սարքը արձանագրում է, թե երբ եւ որտեղ երկրակեղեւի լարվածությունը կվերածվի տեկտոնիկ տեղաշարժի: Վիբրացիաներին հասնել հաջողվում է զատ-զատ պտտվող երկու գլանների շնորհիվ: Կենտրոնախույս ուժի հաշվին ստեղծվող ազդանշանը «գրգռում է» հողը:

Երկրաբանները իրենց հերթին օգտակար հանածոներ որոնելիս կնախընտրեն օգտվել վիբրատորից եւ ոչ թե առաջվա պես ուղղորդված պայթեցումներ կատարել: Շենքեր կառուցելիս հնարավոր կլինի ստուգել շինանյութերի սեյսմակայունությունը, ինչպես նաեւ կատարել բնահողի նախնական տարրալուծում:

# Հայաստանում նույնպես կլինեն «5-աստղանի Դելյուքս» հյուրանոցներ

*Ո՞րն է լինելու այս հյուրանոցների տարբերությունը 5-աստղանի հյուրանոցներից*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» օրենքի փոփոխությունները կքննարկվեն այսօր կառավարությունում: Մասնավորապես նախատեսվում է, որ Հայաստանում հյուրանոցները որակավորվելու են հնգաթեւ աստղերով նշվող մեկից հինգ աստղերով եւ հնգաթեւ աստղերով ու Դելյուքս գրառմամբ նշվող հինգ-աստղանի Դելյուքս որակավորման կարգերով, մոթելները՝ հնգաթեւ աստղերով նշվող մեկից հինգաստղանի որակավորման կարգերով, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները՝ հնգաթեւ աստղերով նշվող մեկից չորսաստղանի որակավորման կարգերով, հանգստյան կամ մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային բնակատեղիները, ճամբարային բնակատեղիները, զբոսաշրջային տները՝ հռոմեական թվանշաններով նշվող երրորդից առաջին կարգի որակավորման կարգերով:

Հինգաստղանի Դելյուքս հյուրանոցի համար սահմանվելու է պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի (1000 դրամի) 1500-ապատիկի չափով: Մինչեւ երեք աստղ հյուրանոցի, մոթելի ուրաքանչյուր աստղի համար պետական տուրքը կկազմի տարեկան բազային տուրքի 150 -ապատիկի չափով, չորս աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով, հինգ աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան բազային տուրքի 250-ապատիկի չափով, հյուրանոցատիպ հանգրվանի, առողջարանի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով: Հանգստյան եւ մասնագիտացված ճամբարի կամ տան, պանսիոնի, զբոսաշրջային, մանկապատանեկան, ճամբարային բնակատեղի (համալիրի) I կարգի համար պետական տուրքը կկազմի տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով, II կարգի համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով, III կարգի համար՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով: Զբոսաշրջային տան I կարգի համար տարեկան պետական տուրքը կկազմի բազային տուրքի 15-ապատիկի չափով, II կարգի համար՝ տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով, III կարգի համար՝ տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով:

Տես էջ 3

# «Հայկական» երկրաշարժ




*Վլադիմիր Բալասանյան*

Ինչո՞ւ, օրինակ, հունգարացին առավել ապահովագրված է երկրաշարժերից, քան հայը: Խնդիրն ամենեւին էլ միայն այն չէ, որ Հայաստանն, ի տարբերություն Հունգարիայի, սեյսմավտանգ գոտում է: Խնդիր ունենք նաեւ ազգային խառնվածքի հետ կապված: Օրինակ՝ 10 հունգարացուց միայն մեկ-երկուսի մտքով կարող է անցնել ընդլայնել իր բնակարանը բազմահարկ շենքի, ասենք, 8-րդ հարկում, սակայն 10 հայից առավելագույնը մեկ-երկուսի մտքով սա կարող է չանցնել: Մինչդեռ բազմահարկ շենքերի սեյսմավտանգ լինելն էլ ավելի է սրվում, երբ շենքին կցվում են այլ շինություններ, կամ բնակիչներից ոմանք կամայական փոփոխությունների են ենթարկում շենքը:

Արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետի տեղակալ **Աշխեն Թովմասյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը հայաստանյան սեյսմիկ վտանգներին հավելեց նաեւ այն, որ Երեւանի շենքերի մեծ մասը վտանգված է: «Դրանք կառուցված են խորհրդային շրջանում, համապատասխանեցված են այն ժամանակների սեյսմիկ չափանիշներին, այդ շենքերի վրա ազդեցություն թողել է նաեւ Սպիտակի երկրաշարժը», ասաց տիկին Թովմասյանը:

Սեյսմոլոգ **Վլադիմիր Բալասանյանն** իր հերթին, իրենց իսկ շենքի օրինակով, ընդգծում է, որ վերջին 30 տարվա ընթացքում ինքը չի հիշում մի դեպք, երբ համապատասխան վարչությունից գան եւ քննության ենթարկեն շենքը: Այնինչ սեյսմոլոգն ինքը ամեն օր առիթ է ունենում տեսնելու, որ իրենց շենքի հենասյուները այլեւս ամուր չեն: Միեւնույն ժամանակ, սակայն, ԱԻՆ սեյսմիկ ծառայության ներկայացուցիչը պնդում է. «Երեւանի շենք-շինությունների համար պարբերաբար կատարվում են տեխնիկական վիճակի գնահատումներ, սակայն միայն այն դեպքում, երբ սեփականատերն է այս առաջարկով դիմում»: Փաստորեն, երբ հաշվի ենք առնում, որ բնակելի շենքերը սեփականատեր չունեն, ապա ԱԻՆ սեյսմիկ ծառայությունն այդ շենքերի տեխնիկական վիճակի գնահատականներ չի տալիս, ինչպես սեյսմոլոգ Բալասանյանն է նշում՝ «կոնկրետ վերջին 30 տարում ես այդպիսի բան չեմ հիշում»: Այդուհանդերձ նախարարության ներկայացուցիչը ընդգծում է. «Կառավարությունը շենքերի ամրացման համապատասխան միջոցներ ձեռք է առնում, որոնք, սակայն, դեռեւս կյանքի չեն կոչվում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով»: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ բնակելի շենքերի ամրացման ուղղությամբ կառավարությունը, եթե անգամ «մտածում է», չունի միջոցներ՝ իրագործելու, հետեւաբար այն շենքերը, որտեղ ապրում ենք, սեյսմավտանգ են: Իսկ եթե հաշվի առնենք, որ մայրաքաղաքում է կենտրոնացած հանրապետության բնակչության զգալի մասը, նաեւ այն, որ երկիրը սեյսմավտանգ գոտում է, այսինքն՝ երկրաշարժերը մեր տարածաշրջանում, ինչպես տեսնում ենք, հաճախակի կարող են լինել, ապա պատկերացնելն անգամ սարսափելի է այն աղետը, որը կարող է լինել, եթե Երեւանի մոտ երկրաշարժ լինի:

Նախարարության ներկայացուցիչ Աշխեն Թովմասյանը վստահեցնում է, որ տարածաշրջանում վերջին՝ Իրանի երկրաշարժը, որը զգացվեց նաեւ Հայաստանում, այսօր մարման փուլում է, հետեւաբար ավելի ուժեղ երկրաշարժ սպասելի չէ: Ճիշտ է, տիկին Թովմասյանը ընդգծեց. «Մենք երբեք չենք բացառում ուժեղ երկրաշարժերը»: Իսկ սեյսմոլոգ Վլադիմիր Բալասանյանը ո՛չ բացառում է ավելի ուժեղ երկրաշարժը տարածաշրջանում իրանյանից հետո, ո՛չ հերքում. «Կարող է լինել, որ Իրանի երկրաշարժով տարածաշրջանային երկրաշարժների այս փուլը փակվի, բայց կարող է եւ չփակվի», ասում է Բալասանյանը՝ վերհիշելով 1988-ը. «Հիշում ենք, որ այդ թվականին եւ նախորդ ու հաջորդ տարիներին երկրաշարժեր եղան Հայաստանում, Վրաստանում եւ Իրանում: Հիմա, փաստորեն, եղան Թուրքիայում (Վանի ավերիչ երկրաշարժը), Ադրբեջանում եւ կրկին Իրանում», հիշեցնում է սեյսմոլոգը: Ի դեպ, Բալասանյանը համաձայն չէ այն կարծիքին, թե Ադրբեջանի նավթարդյունաբերությունը կարող է սրել սեյսմիկ վտանգը ողջ տարածաշրջանում, քանի որ Ապշերոնյան թերակղզին բոլորովին էլ մեր տարածաշրջանի սեյսմիկ գոտում չէ. «Դա միայն նրանց խնդիրն է, ոչ տարածաշրջանի», համոզմունք հայտնեց Բալասանյանը:

Իսկ մեր խնդիրն, անշուշտ, շենք-շինությունների ապրապնդումն է, եւ դրանց կամային ձեւափոխությունների բացառումը. իհարկե՝ բոլորս ենք ցանկանում ապրել ավելի հարմարավետ բնակարանում, սակայն հարմարավետությունը չպետք է լինի անվտանգության հաշվին:

Ի դեպ, սեյսմոլոգ Բալասանյանը կարծիք հայտնեց, որ Հայաստանում սեյսմիկ վտանգը հնարավորինս կմեղմվի, երբ «նախագահը սեյսմոլոգ լինի, վարչապետն էլ, ԱԺ նախագահն էլ»: Հետաքրքրական է, թե, օրինակ, ծանրամարտում օլիմպիական չեմպիոններ ունենալու համար էլ պե՞տք է, որ նախագահը, վարչապետն ու ԱԺ նախագահը ծանրամարտիկ լինեն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

## ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

# Կօգնի՞ Իլհամ Ալիեւին Սողոմոն Թեհլերյանը

**Ինչպես հայտնի է, ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովը կացնահարել էր հայ սպա Գուրգեն Մարգարյանին, հունգարական արդարադատության կողմից դատապարտվել ցմահ ազատազրկման եւ պատիժը կրում է Բուդապեշտի բանտում: Մեկ անգամ չէ, որ ադրբեջանական կողմը փորձել է Հունգարիայի իշխանությունների հետ քննարկել նրան Ադրբեջան էքստրադիցիայի ենթարկելու հարցը:**

**Պաշտոնական Բաքվի ձեռնարկումներին միացել է ASIMDER («Հայկական անհիմն պահանջատիրության դեմ միջազգային ասոցիացիա») կոչվող թուրքական կազմակերպությունը: Ինչպես տեղեկացնում է vesti.az.-ը, սույն «միջազգային կազմակերպության» Իգդիրի մասնաճյուղը «Թուրքիայում, Ռուսաստանում, Ադրբեջանում եւ այլ երկրներում ստորագրահավաք է կազմակերպել՝ միջնորդելու հունգարական կողմին, որպեսզի մեղմացվի Ռամիլ Սաֆարովի պատիժը, եւ վերջինս մնացած ժամկետով պատիժը կրի Ադրբեջանում»:**

**Այս առթիվ կազմակերպության Իգդիրի կառույցի պատասխանատու Գյոքսել Գյուլբեյը «սենսացիոն զուգահեռ է անցկացրել» Ռամիլ Սաֆարովի եւ հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի միջեւ: Նրա ընկալմամբ, Բեռլինի դատարանը Սողոմոն Թեհլերյանին անպարտ է ճանաչել, քանի որ վերջինս Թալեաթին սպանել էր հոգեկան անհավասարակշիռ վիճակում: «Ռամիլ Սաֆարովը նույնպես ենթարկվել է նվաստացումների: Ի տարբերություն Թեհլերյանի, նա սպանությունը չի կանխածրագրել, այլ գործել է աֆեկտի ազդեցության տակ», ասել է թուրք գործիչը եւ ավելացրել, որ Սաֆարովին «արդարացնելու գործում նրան կօգնի Սողոմոն Թեհլերյանը»:**

**Ստորագրահավաքին միացել է շուրջ 2,5 հազար մարդ: Ռամիլ Սաֆարովին արդարացնելու պահանջով հանրագիրը հանձնվել է Թուրքիայում Հունգարիայի դեսպանությանը: Ինչպիսի՞ն կլինի հունգարական արդարադատության վերաբերմունքը: Անհավանական է թվում, որ Հունգարիայում սկսվի նոր դատական գործընթաց: Այդուհանդերձ, արժե Գյոքսել Գյուլբեյի եւ ադրբեջանական իշխանությունների ուշադրությունը հրավիրել հետեւյալի վրա. Թալեաթը օսմանյան կառավարության ներքին գործերի նախարարն էր եւ ուղղակի պատասխանատվություն էր կրում Թուրքիայում հայերի դեմ իրականացված ոճրագործությունների համար: Երկրորդ եւ ամենակարեւոր հանգամանքն այն է, որ Սողոմոն Թեհլերյանը սպանել է թուրքական դատարանի կողմից արդեն իսկ հեռակա կարգով մահվան դատապարտված պատերազմական հանցագործի, որի մեղքն ապացուցված էր օսմանյան օրենքներով:**

**Հայ սպա Գուրգեն Մարգարյանի եւ Թալեաթի միջեւ «զուգահեռը» հիմնազուրկ է ե՛ւ իրավական, ե՛ւ այլ առումներով: Եթե դատելու լինենք «աֆեկտի տրամաբանությամբ», ապա աշխարհի ամեն կետում ամեն մի հայ «իրավունք ունի» սպանելու թուրքի կամ ադրբեջանցու եւ իր արարքը «հիմնավորելու» 1915թ. կամ Սումգայիթի եւ Բաքվի ցեղասպանությամբ: Իմաստ չունի Ռամիլ Սաֆարովին ներկայացնել իբրեւ «հայկական ագրեսիայի զոհի»: Իրականությունն այն է, որ ադրբեջանցի երիտասարդ զինվորականը դարձել է իր երկրի պետական քարոզչության զոհը: Եվ նրան ցմահ ազատազրկման դատապարտելով հունգարական արդարադատությունը փաստորեն մեղադրական վճիռ է կայացրել ադրբեջանական իշխանությունների դեմ: Այնպես որ, Իլհամ Ալիեւը Սաֆարովին չէ, որ ուզում է արդարացված տեսնել, այլ՝ իրեն: Այս ձգտումներում, սակայն, նրան ոչ ոք օգնել չի կարող: Սողոմոն Թեհլերյանի նախադեպը՝ հատկապես:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Խնդակցություն

Մեր թերթի աշխատակազմից լրագրող-վերլուծաբան Աղավնի Հարությունյանը բախտավորվել է առաջնեկ արու զավակով՝ Առնո: Ջերմորեն շնորհավորում ենք մեր աշխատակցուհուն եւ ամուսնուն՝ Արամ Օհանյանին այս բարեբաստիկ առիթով եւ երջանիկ ապագա մաղթում փոքրիկին:

# ... Եթե բանական լուծումներ չգտնվեն

*1-ին էջից*

**Ավելին, կուզենայինք, որ նա պատասխաներ մեր հարցին. «Ինչու՞ է 4 մլն ադրբեջանցի լքել իր «օրըստօրե բարգավաճող» հայրենիքը, էլ չենք խոսում այն մասին, որ մի քանի հարյուր հազար ադրբեջանցի էլ կյանքն անցկացնում է Թուրքիա-Ադրբեջան ճանապարհին՝ օրվա հաց վաստակելու համար»:**

**Այժմ՝ սիրիահայերի ճակատագրով Նովրուզ Մամեդովի «մտահոգվածության» մասին: Խոր դիտողունակություն պետք չէ հասկանալու, որ Ադրբեջանը տվյալ դեպքում կատարում է թուրքական կողմի պատվերը: Թուրքիան շահագրգռված է, որ Միջին Արեւելքի երկրների հայկական համայնքները տարտղնվեն կամ առնվազն թուլանան այնքան, որ հետճգնաժամային իրավիճակում հայկական գործոնը ազդեցություն չունենա: Պատահական չէ, որ Իլհամ Ալիեւի խոսնակը վստահություն է հայտնում, որ սիրիահայերը «Լեռնային Ղարաբաղ չեն գա»: Միաժամանակ նա նենգաբար խոսում է այն մասին, որ «մինչեւ վերջերս Սիրիան հայերի համար հայրենիք էր, բայց հենց որ այդ երկրում իրավիճակը սրվեց, նրանք սկսեցին մտածել փախչելու մասին»:**

**Խնդիրն, ինչպես տեսնում ենք, «դիտարկված է» մի հեռապատկերում, կարծես թե «սիրիական ճգնաժամն արդեն կարգավորված է, իսկ հայերն այնտեղ չեն, ոչ էլ վերաբնակվել են Արցախում»: Պարզապես՝ այդ երկում «հայեր, ճիշտ է, ապրում էին, բայց վտանգի ժամին կամավոր հեռացան»: Ինչպես թուրքական պաշտոնական քարոզչությունն է «բացատրում» Թուրքիայում հայերի հայրենազրկությունը: Նովրուզ Մամեդովի դեպքում սույն «տեսությունը» նաեւ ենթատեքստային իմաստ ունի: Այն է՝ Ադրբեջանում չեն կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս պատահեց, որ «ոչ հայրենասեր» եւ «մշտապես հարստությունը եւ բարեկեցությունը ընտրող հայերը» չլքեցին Արցախը: Ոչ միայն չլքեցին, այլեւ այսօր պատրաստակամություն են հայտնում ընդունելու իրենց սիրիահայ եղբայրներին եւ քույրերին:**

**Իլհամ Ալիեւի աշխատակազմի «պայծառ ուղեղի» ամբողջ մտահոգությունն այն է, թե ի՞նչ կարելի է անել, ինչպե՞ս, որ ե՛ւ Սիրիան ու ողջ Միջին Արեւելքը, ե՛ւ Լեռնային Ղարաբաղը ե՛ւ, ինչու չէ, Հայաստանը «հայաթափվեն»: Սրանով է թերեւս բացատրվում ադրբեջանական իշխող վերնախավի ակնհայտ ծախու, տարածաշրջանի հանդեպ դավաճանական կեցվածքը, որ դրսեւորվում է թե՛ Սիրիայի, թե՛ հատկապես Իրանի հարցում: Պաշտոնյաները դեռ մի փոքր «զուսպ» են: Իսկ մամուլը հաստատ իրեն յուրահատուկ ճոթռբերանությունից էլ այնկողմ է անցել:**

**«Զերկալո»-ն արդեն բացահայտ գրում է, որ Մեծ Մերձավոր Արեւելքի նախագծում Միացյալ Նահանգները «բոնուս ունի Ադրբեջանին տալու, մինչդեռ Ռուսաստանը ոչինչ չի կարող առաջարկել»: Ո՞րն է «բոնուսը»: Ըստ մեկնաբանի՝ «դա Ադրբեջանի վերամիավորումն է, որի դեպքում Թուրքիա-Ադրբեջան տանդեմը կունենա Ռուսաստանին հավասարակշռող մարդկային եւ նյութական ռեսուրսներ»: Այդ «նախագծի իրականացման միակ խոչընդոտը» տարածաշրջանում հայկական գործոնն է՝ Հայաստանը, Արցախը եւ Միջին Արեւելքի երկրների հայկական սփյուռքը:**

**Ի՞նչ ընթացք կունենան իրադարձությունները: Ադրբեջանում չեն թաքցնում, որ «Սիրիայից հետո հերթը կհասնի Իրանին»: Խոսքը ԻԻՀ մասնատման եւ Թավրիզ «մայրաքաղաքով միասնական Ադրբեջան ստեղծելու» մասին է: Բայց նույնիսկ արեւահար ոգեւորվածության պահին էլ «Զերկալո»-ի մեկնաբանը զգուշորեն ակնարկում է, թե դա կարող է «տեղի ունենալ անգամ ի հակակշիռ իշխող էլիտայի»: Պետք է հասկանալ այնպես, որ Իլհամ Ալիեւի համար ամենագլխավորը ոչ թե «ազգային իղձերը», այլ սեփական իշխանության պահպանումն է: Այդուհանդերձ, հարեւան երկիրը ներքաշվել է մի շրջապտույտի մեջ, որից կարծես դուրս գալու ելք այլեւս չունի: Մնում է սպասել, թե երբ վրա կհասնի տարածաշրջանային մղձավանջը: Եթե, իհարկե, մինչ այդ բանական լուծումներ չգտնվեն:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հնդկաստանի անկախության օրը՝ հայ-հնդկական մթնոլորտում

65 տարի առաջ՝ օգոստոսի 15-ին Հնդկաստանի վարչապետ Ջավահարլալ Ներուն Դելիում բարձրացրեց անկախ Հնդկաստանի ազգային դրոշը: Դրանից հետո՝ ամեն տարի օգոստոսի 15-ին ազգային դրոշի բարձրացման գեղեցիկ ավանդույթով հնդիկ ժողովուրդը նշում է իր անկախության օրը: Երեկ հենց այդ օրն էր: Հայաստանում Հնդկաստանի դեսպանատանը հավաքվել էին ինչպես հնդկական համայնքի ներկայացուցիչները, դեսպանատան աշխատակիցները, այնպես էլ ներկայացուցիչներ Հայաստանից: Հավաքված հայերից ամեն մեկն իր հերթին ինչ-որ առումով կապված է հնդկական իրականությանը, որն իր տարաբնույթ կողմերով եւ միայն իրեն բնորոշ ժողովրդավարությամբ գրավում է անգամ նրանց, որոնք երբեւէ չեն եղել Հնդկաստանում:

Թեեւ անկախության տոնը նշվում է 66-րդ անգամ, սակայն հաշվարկվում է, որ այս տարի Հնդկաստանի անկախության 65-րդ տարեդարձն է: Անկախության օրը Հնդկաստանում նշում են բոլոր քաղաքացիները՝ անկախ ազգային ու դավանական պատկանելությունից: Ու ոչ միայն քաղաքացիները, այլեւ այնտեղ գտնվող օտարերկրացիները եւս հետաքրքրությամբ են մասնակցում անկախության օրվան կամ մյուս տոներին նվիրված արարողություններին, որոնց կազմակերպումն ու մոտեցումն ուղղակի կլանում են քեզ, նույնիսկ այն դեպքում, երբ այդ տոնի մասին դեռ ոչինչ չգիտես:

1947 թվականին Մեծ Բրիտանիայից Հնդկաստանի անկախացումից հետո 3 տարվա ընթացքում հաստատվեց երկրի սահմանադրությունը, ու երբ 1950-ին սահմանադրությունն արդեն պատրաստ էր, հունվարի 26-ին Հնդկաստանը հռչակվեց հանրապետություն: Հնդիկներն ամեն տարի՝ հունվարի 26-ին էլ նշում են իրենց հանրապետության օրը՝ ու կրկին պետական դրոշի բարձրացման ու ազգային հիմնը երգելու ավանդույթով:

Հայաստանում Հնդկաստանի դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար **Պանկաջ Սախենան** երեկ իր ելույթում ներկաներին փոխանցեց Հնդկաստանի նորընտիր նախագահի ուղերձը՝ գրված անկախության օրվա առիթով:

Իսկ «**Ազգի**» հետ զրույցում Պանկաջ Սախենան նշեց հոբելյանական մի ուրիշ միջոցառման մասին էլ. «Այս տարի լրանում է մեր երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-րդ տարին, ինչին նվիրված մի շարք ծրագրեր ունենք»:



Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունը Հայաստանի ու Հնդկաստանի հանրապետությունների միջեւ ստորագրվել է 1992-ի օգոստոսի 31-ին:

Պանկաջ Սախենան ասում է՝ 20-րդ տարեդարձի առթիվ առաջիկա ամիսներին Հայաստանում կկազմակերպվեն միջոցառումներ՝ նախատեսվում է հնդկական ֆիլմի ցուցադրություն, մշակութային ներկայացումներ: «Սպասում ենք, որ Հնդկաստանից այստեղ կգան մշակութային խմբեր, եւ ավելի շատ ուզում ենք հայերին ներկայացնել հնդկական դասական արվեստը, քանի որ Բոլիվուդից զատ՝ Հնդկաստանն ունի նաեւ դասական ու ավանդական շատ հարուստ մշակույթ»:

Ինչ վերաբերում է երկու երկրների միջեւ հարաբերություններին, ապա զրուցակիցս ընդգծում է՝ բոլոր ոլորտներում, լինի դա քաղաքական ու տնտեսական թե մշակութային, Հայաստանն ու Հնդկաստանն ունեն գերազանց հարաբերություններ: Բացի համագործակցությունից՝ հայ ու հնդիկ ժողովուրդներն ունեն նաեւ նմանություններ: «Օրինակ՝ 2 ժողովուրդներն էլ հավատում են ընտանիքին ու գնահատում այն: Մեր ժողովուրդները նմանություններ ունեն նաեւ ապրելաձեւի, մտածողության մեջ, նույնիսկ նմանություններ կգտնեք մարդկանց արտաքինի մեջ, իսկ մեր լեզուներում կգտնեք ընդհանուր բառեր», հավելում է Պանկաջ Սախենան:

Սակայն բացի նմանություններից՝ երկու ժողովուրդներն ունեն իրենց առանձին ավանդույթների ու արժեքների հարուստ ժառանգությունը, չէ՞ որ երկուսն էլ աշխարհի հին ժողովուրդներից են, ու անկախ զարգացման՝ իրենց որդեգրած ուղղություններից՝ նրանք մնացել են բարեկամ ժողովուրդներ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ֆիլիպինները կարեւորում է ՀՀ-ի նախաձեռնությունը՝ նոր լիցք տալ երկկողմ հարաբերություններին



Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ Ֆիլիպիններում էր: Մայրաքաղաք Մանիլայի քաղաքապետից ստանալով քաղաքի խորհրդանշական բանալին՝ նախարար Նալբանդյանը հյուրընկալվեց իր ֆիլիպինցի գործընկերոջը՝ Ալբերտ դել Ռոսարիոյին, այնուհետեւ՝ նախագահ Բենիգնո Աքինոյին: Ֆիլիպինների նախագահը, ինչպես տեղեկանում ենք ԱԳՆ մամուլի վարչությունից, կարեւորել է երկկողմ հարաբերություններին նոր լիցք տալու Հայաստանի նախաձեռնությունը: ՀՀ ԱԳ նախարարն ընդգծել է, որ իր այցելության նպատակն է նոր մակարդակի բարձրացնել ասիական տարածաշրջանում կարեւոր դերակատարություն ունեցող երկրի՝ Ֆիլիպինների հետ համագործակցությունը:

Ավելի վաղ, նախարար դել Ռոսարիոյի հետ հանդիպմանը, երկու նախարարները պայմանավորվել են քաղաքական երկխոսության, առեւտրատնտեսական հարաբերությունների, մշակութային փոխանակումների խթանման, իրավապայմանագրային դաշտի ձեւավորման ուղղությամբ: Քննարկվել են նաեւ ներդրումների խրախուսման, գիտակրթական, ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, առողջապահության, շինարարության, տուրիզմի ոլորտներում փոխգործակցության ձեւավորման հնարավորությունները: Նախարարներ Նալբանդյանն ու դել Ռոսարիոն մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային խնդիրների շուրջը, իսկ բանակցություններից հետո երկու երկրների ԱԳ նախարարները ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ «դիվանագիտական կամ պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագրից ազատելու վերաբերյալ»:

Էդվարդ Նալբանդյանը Ալբերտ դել Ռոսարիոյին հրավիրել է Հայաստան:



# Էթիկայի հանձնաժողովը զուցե մի ճըռթ փոխի մթնոլորտը

*1-ին էջից*

**Հանձնաժողովի կազմն արդեն ձեւավորվել է, դա տեղի է ունեցել Ազգային ժողովի նախագահի հուլիսի 2-ի հրամանագրով, եւ ինչպես օրենքով է նախատեսված՝ այնտեղ ընդգրկված են բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները, իսկ հանձնաժողովի նախագահ-փոխնախագահին ԱԺ նախագահը նշանակել էր մեծամասնության եւ ամենամեծ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչներ Դավիթ Հարությունյանին ու Նիկոլ Փաշինյանին, սա նույնպես կանոնակարգի պահանջ է: Սակայն ՀԱԿ-ի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանը հրաժարվեց փոխնախագահի պաշտոնից՝ հայտարարելով, թե միայն որպես հանձնաժողովի շարքային անդամ անելիք ունի եւ կառուցողական է տրամադրված: Նա նաեւ նշել էր, թե նախագահի եւ փոխնախագահի նշանակման ԱԺ նախագահի հրամանն անօրինական է, քանի որ ՀԱԿ խմբակցությունն իր թեկնածությունը ներկայացրել էր հանձնաժողովի անդամի եւ ոչ թե փոխնախագահի համար, այսինքն՝ պրոցեդուրալ բացթողում էր նշել: Ըստ parliament monitoring.am կայքի՝ հանձնաժողովիի նախագահ Դավիթ Հարությունյանը հակասություն չէր տեսել ԱԺ նախագահի հրամանագրում, քանի որ ՀԱԿ-ը հանձնաժողովում ուներ մեկ անդամի հնարավորություն, այդ մեկ անդամին եւս մեկ անգամ հանձնաժողովի նախագահի տեղակալի համար ներկայացնելու կարիքը չի եղել: Ու անկախ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից՝ նա օրենքով համարվում է էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ: Եղել է ԱԺ նախագահի հետ հանդիպում այս հարցով, եւ աշնանը գուցե եւ հարկ լինի օրենսդրական նախաձեռնությամբ շտկել այս հարցի հետ կապված օրենսդրական անհարթությունը: Իսկ ՀՅԴ-ից հանձնաժողովի անդամ Արծվիկ Մինասյանն ընդհանրապես առաջարկում է, որ այս հանձնաժողովի նախագահ-փոխնախագահ լինեն ոչ թե միայն մեծամասնության եւ ամենամեծ ընդդիմադիր ուժի ներկայացուցիչները, այլ հաջորդաբար խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերը: Նիկոլ Փաշինյանին մտահոգում է այն փաստը, որ կանոնակարգը չի սահմանել հանձնաժողովին դիմելու կարգը եւ այն անձանց շրջանակը, ովքեր կարող են դիմել հանձնաժողովին՝ ասենք, եթե խորհրդարանի միջանցքում պատգամավորները հայհոյում են միմյանց, կամ վիրավորում են լրագրողին եւ այլն՝ այս տեսակ դեպքերին դիմելու եւ էթիկայի հանձնաժողովի օպերատիվ վերաբերմունքի հնարավորություն չկա: Մամուլում իր կարծիքը գրելով էթիկայի հանձնաժողովի մասին՝ նա եզրակացրել էր, թե հանձնաժողովին տրված է լիազորություն, իսկ այդ լիազորության կիրառումը տանում է փակուղի:**

**Իսկ որ խորհրդարանում կամ նրանից դուրս բազմաթիվ դիպվածներ են լինում, որտեղ մեր ազգընտիրներն իրենց աղեկվաս չեն պահում, դա փաստ է:**

**Նշենք, որ առաջին քննարկումների թվում կարող է լինել ՀՀԿ-ական Ռուբեն Հայրապետյանի պահվածքը, եթե նա վայր դնի պատգամավորական մանդատը: Ճիշտ է, Ռուբեն Հայրապետյանը հայտարարել է մանդատը վայր դնելու մասին, սակայն եթե նա նստաշրջանի ժամանակ չկրկնի այդ հայտարարությունը ու մնա պատգամավոր, ապա կլինեն դիմումներ, ու նրա պահվածքը պետք է էթիկայի հանձնաժողովի քննության նյութ դառնա՝ բոլոր անցանկալի հետեւանքներով:**

**Սակայն չի կարելի ասել, որ էթիկայի հանձնաժողովը կդառնա Ազգային ժողովի մթնոլորտը հիմնովին փոխելու գործիք, քանի որ էթիկայի հանձնաժողովը լինի, թե ոչ, ԱԺ մոտ 75 գործարար պատգամավորները չեն թողնելու իրենց բիզնես-շահն ու ամբողջ օրը Ազգային ժողովում նստեն կամ գոնե նիստերին չբացակայեն: Կամ մասնավոր շահեր սպասարկող օրենքներ չբերեն խորհրդարան ու իրենց բիզնեսի ծառը չջրեն: Դրան հավատացողները միամիտ պետք է լինեն: Սակայն իրավիճակը մի ճըռթ կարող է փոխվել: Իրենց հավաքողներ կլինեն՝ ընդդիմադիրների ու մամուլի փայ չդառնալու համար: Ամեն ինչ կուրվագծվի այն ժամանակ, երբ իր առաջին նիստում էթիկայի հանձնաժողովն ընդունի գործունեության կանոնադրություն, որից հետո ձեռնամուխ կլինի պատգամավորների վարքի եւ գործունեության հետ կապված առաջին դիմումների քննությանը:**

**Հիշեցնենք, որ այս հանձնաժողովի անդամ են ԲՀԿ-ից Մերուժան Սիմոնյանը, ՕԵԿ-ից Հովհաննես Մարգարյանը, «Ժառանգությունից» Զարուհի Փոստանջյանը, ՀԱԿ-ից Նիկոլ Փաշինյանը, ՀՀԿ-ից Դավիթ Հարությունյանը, ՀՅԴ-ից Արծվիկ Մինասյանը:**

# Հայաստանում նույնպես կլինեն «5-աստղանի Դելյուքս» հյուրանոցներ

*1-ին էջից*

**Այս փոփոխության անհրաժեշտությունը, ըստ կառավարության հիմնավորման, բխում է Հայաստանում հյուրանոցների որակավորման նոր՝ «5-աստղանի Դելյուքս» կարգի ներմուծման անհրաժեշտությունից: Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւ Հայաստանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համակարգի հետ համեմատական վերլուծությունը ցույց են տալիս, որ որոշ երկրներում, բացի հիմնականում կիրառվող առավելագույն 5-աստղանի որակավորման կարգից, առավել շքեղ եւ նվազագույն պահանջներին լրացուցիչ չափանիշներով գերազանցող հյուրանոցների տարբերակման համար կիրառվում են 5 աստղից բարձր որակավորման կարգ (օրինակ՝ «5-աստղանի Դելյուքս») կամ որակավորման կարգ չհամարվող շքանշան (օրինակ՝ ակոլադա), կամ մակդիր (Սուպերիոր), ինչը Հայաստանում չի կիրառվում:**

**Ակնկալվում է, որ 5-աստղանի որակավորման կարգը գերազանցող «5-աստղանի Դելյուքս» որակավորման կարգի ներդրումը Հայաստանում եւ առավել շքեղ հյուրանոցների տարբերակումը կնպաստեն այդպիսի հյուրանոցներում ներդրումների, ինչպես նաեւ առավել բարձր որակական պահանջներ ունեցող զբոսաշրջիկների ներգրավմանը:**

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

# Ընդունելութիւն Կոնգրէսի հայազգի թեկնածու Թերրի Ֆիլիփսի ի պատիւ

Նախընտրական շրջան ըլլալուն, Ամերիկայի տարածքին, ինչպէս այլ համայնքներու տարագային, այնպէս ալ մեզի՝ ամերիկահայերուս համար աշխատանքի նոր դաշտ բացուած է թիկունք կանգնելու ամերիկացի այն քաղաքական դէմքերուն, որոնք զօրավիգ պիտի կանգնին, իրենց ընտրուելէն ետք, Հայկական դատին ու առաջին հերթին՝ ճանչնալու Հայկական ցեղասպանութեան իրողութիւնը:

Այս աշխատանքի ծիրէն ներս կը մտնէ Կալիֆոռնիոյ Բէքըրսֆիլդ քաղաքէն Կոնգրէսի ներկայացուցիչներու տան ամերիկահայ թեկնածու Թերրի Ֆիլիփսը: Ընտրապայքարի այս բուռն օրերուն, ի նպաստ հայազգի թեկնածուին տեղի ունեցաւ ընդունելութիւն յուլիս 22, 2012, կիրակի օր կէսօրէ ետք, տէր եւ տիկին Ջոն Սիմոնեաններու բնակարանը, Մենիեթըն:

Մօտ 40 հրաւիրեալներ ներկայ գտնուեցան ընդունելութեան, որ ուրիշ նման ընդունելութիւններէ տարբեր երեւոյթ մը ստացաւ: Երկխօսութիւն մը տեղի ունեցաւ հրաւիրեալներուն եւ թեկնածուին միջեւ, առաւելաբար ամերիկեան այսօրը հետաքրքրող հարցերով. տնտեսական եւ գործազրկութեան տագնապները, հարկային դրութիւնը, սահմաններու ապահովումը անօրէն գաղթականներու դիմաց, կրթութեան բարելաւումը, ապօրէն թմրեցուցիչներու ներածումը, Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնը եւ անտեղի միջամտութիւնը տարբեր երկիրներու քաղաքական կեանքէն ներս, ընկերային եւ առողջապահական ապահովագրութիւնը եւ այլն:



Բարեբախտաբար, պարոն Թ. Ֆիլիփս իւրաքանչիւր հարցին համոզիչ եւ լրացուցիչ պատասխաններ կրցաւ տալ ներկաներուն, որոնք մեծամասնութեամբ Միացեալ Նահանգներ ծնած, հասակ առած ու յաջողած ազգայիններ էին: Նիւ Եորքի քաղաքական մտածողութիւնն ու հարցերուն մօտենալու կերպը որքան ալ տարբեր է Կալիֆոռնիոյ ընտրող ամերիկացիներու մտածելակերպէն, սակայն ներկայացուած հարցերը, համընդհանուր կը կազմեն նոյն մտահոգութիւնները իւրաքանչիւր ամերիկացիի համար:

Անշուշտ եղաւ անդրադարձ Հայկական դատի եւ ցեղասպանութեան հետ կապուած. անկասկած, երբ պարոն Ֆիլիփս ընտրուի պիտի ըլլայ միա՛կ հայը այդ աթոռին նստած եւ անպայմանօրէն ալ ինք պիտի դառնայ գլխաւոր խօսափողը մեր արծարծած խնդիրներուն: Ըսենք որ Նիւ Եորքը բերած եղաւ առիւծի մասնակցութիւնը, այս հաւաքով, իր թեկնածութեան համար եղած նիւթական աջակցութիւններուն: Կ՚արժէ յիշել, որ հանրածանօթ ամերիկահայ ազգային բարերարներէն ներկայ էին պարոններ Ալեքս Տասուրեան, Էդուըրդ Կիւլպէնկեան եւ Սարգիս Պետեւեան: Ըսենք նաեւ որ, այս առթիւ, ներկայ էր նաեւ Պէյրութի ՌԱԿ «Զարթօնք» պաշտօնաթերթի խմբագիր Պայծիկ Գալայճեան, որ վերահասու դարձաւ, այս առթիւ, Միացեալ Նահանգներու ընտրական արշաւին, որ այնքա՜ն տարբեր է Լիբանանէն:

Նոյեմբերի սկիզբը տեղի ունենալիք այս ընտրութիւններուն Թերրի Ֆիլիփս որպէս անկախ թեկնածու պիտի պայքարի հանրապետական վերընտրելի գոնկրէսականին դէմ: Նշենք որ դեմոկրատ թեկնածու չէ ներկայացուած:

Ամերիկահայութեան արդար ձայնն է, որ պիտի լսուի պարոն Թերրի Ֆիլիփսի յաջող ընտրութեամբ: Նշենք որ հայազգի թեկնածուն լրագրող է ասպարէզով եւ քանի մը տարիներ առաջ լոյս ընծայած է պատմավէպ մը «Սպանդ խորանի վրայ», որ պատմութիւնն է Ամերիկայի հայոց առաջնորդ երջանկայիշատակ Ղեւոնդ արք. Դուրեանի սպանութեան, 1933ին, Նիւ Եորքի մէջ, Սուրբ պատարագի պահուն: Գիրքը, օրին, գտած էր լայն ժողովրդային ընդունելութիւն:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Ջերսի

# Աշխարհի վերջից հինգ րոպե պակաս

## *Կարդացեք որպես ժամանց, բայց մտորելն էլ չի խանգարի*

*Սկիզբը նախորդ համարում*

**Ֆիլմեր կան, որոնք պատմում են եղանակային զենքերի մասին՝ արհեստական ցունամի կամ եղանակային այլ երեւույթ առաջացնող, հրդեհների բռնկում երկնքից նետված ճառագայթով, ռեզոնանսի երեւույթի օգտագործում՝ երկրաշարժերի եւ այլ աղետների առաջացման համար:**

**Մի առանձնակի ուշադրության է արժանացել այն թեման, որ սեքսուալ հեղափոխության եւ մարդու իրավունքների անվան տակ գեյերի, լեսբուհիների, համասեռամոլների գաղափարները հրամցվում է մարդկությանը՝ այդպիսով նույնպես իրագործելով նվիրական գաղափարը՝ մարդկության թվի կրճատումը: Սեքսի ու բռնության պրոպագանդումը, որը հաջողությամբ իրականացնում են իշխող այդ դինաստիաների ձեռքին գտնվող զանգվածային տեղեկատվական միջոցները, զանգվածաբար փոխում է մարդկային գիտակցությունը: Ընդ որում՝ այս հեղափոխության սկիզբը համարվող Բիթլների հայտնությունը նույնպես համաշխարհային կառավարության նախագծերից է համարվում, քանի որ լիվերպուլցի տաղանդավոր տղաներին հատուկ շրջանառության մեջ է դրել, ապահովել նրանց համաշխարհային համբավը մի ողջ ինստիտուտ՝ համաշխարհային կառավարող դինաստիաներից մեկի՝ Ռոկֆելլերների միջոցներով, ազատ սերը տարածելու առաջնային նպատակով: Մի խոսքով՝ սեքսուալ հեղափոխությունը երկար նախապատրաստել են: Ֆիլմերն այս առիթով հիշել են, որ սեքսուալ հեղափոխությունը ժամանակին Ռուսաստան բերող Այսեդորա Դունկանը, որն ամուսնացավ Սերգեյ Եսենինի հետ, կրկնակի գործակալ էր, իսկ Լենինը, որը գերմանական գործակալ է համարվում, իշխանության գալով՝ որպես առաջին մեկը հոմոսեքսուալիզմի դեմ չպայքարելու դեկրետ է հրապարակում:**

**Ընդ որում՝ գոյություն ունի տելեգոնիա գիտությունը, ըստ որի կնոջ առաջին տղամարդը իր գենային պատկերն է թողնում կնոջ գենետիկայում, այն հետագայում փոխանցելով նրա սերնդի մեջ. փաստորեն սեքսուալ հեղափոխությունը խաթարում է գենետիկան, եւ դա հատկապես վտանգավոր է գենետիկ ինքնությունը կորցնելու վտանգի առաջ կանգնած ազգերի համար: Պատահական չէ, որ երկու տասնամյակ առաջ զարգացում ապրած տելեգոնիա գիտությունը գաղտնիացվել է, քանի որ այն կարող է խանգարել մարդկության կրճատմանն ուղղված սեքսուալ հեղափոխությանը, իսկ այդ հեղափոխության արդյունքում հաշվվում է, որ որոշակի ժամանակահատված հետո մարդկությունը տասն անգամ կարող է կրճատվել: Դա արդեն տեսանելի է Եվրոպայում:**

**Ասվում է, որ Բիլ Գեյթսը նույնպես մասոնական օթյակի անդամ է, ու Գեյթսի հայրը եւ Ռոկֆելլերներից մեկը ժամանակին բացահայտ աշխատում էին մարդկանց թիվը նվազեցնելու ծրագրերի վրա՝ նրանց ֆինանսավորմամբ նոր պատվաստուկներ էին նախագծվում մարդկության թիվը 15 տոկոսով նվազեցնելու համար:**

**Ասենք, որ առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմները նույնպես համարվում են կառավարող այդ դինաստիաների ձեռքի գործը, եւ մարդկության թիվը զգալի նվազեց ժամանակին: Իսկ համաշխարհային գաղտնի կառավարության 1960 թվականին հաստատված ծրագրով՝ որպես գլխավոր նպատակներին հասնելու միջոցներ են նշվում ազատության եւ դեմոկրատիայի գաղափարների շահագործումը, սեքսի եւ բռնության միջոցով մարդկային գիտակցության փոփոխումը, այնպիսի նախագծերի իրացումը տեղերում, որի վերջնական նպատակները կարող են անգամ իրացնողները չիմանալ, այն է՝ դեգրադացնել հասարակություններին այն աստիճան, որ նրանք ադեկվատ չգիտակցվեն իրականությունը: Նշվում է, որ աշխարհի կառավարություններին տրվող ֆինանսական օժանդակությունները նույնպես այդ կառավարություններին կառավարելու միջոց են: Իսկ չենթարկվողներին ծուղակների մեջ են գցում, այնպես անում, որ ընտրվեն իրենց համար ցանկալի ղեկավարներ. օրինակ՝ ժամանակին Մոնիկա Լեւինսկի գործակալի միջոցով խեղճացրին Քլինթոնին, Ստրոս Կանին մեկուսացնելու միջոցով հեշտ դարձրին Ֆրանսիայի ցանկալի նախագահի ընտրությունը եւ այլն:**

**Ասենք, որ վիշապազունների մասին հայոց մեջ եւս հիշողություններ կան նաեւ հայկական աղբյուրներում:**

**Հայոց Թվելյաց երգերում առկա են Մասիսի վրա ապրող վիշապների կամ վիշապազունների պատմությունները եւ այլ վկայություններ: Խորենացին պատմում է վիշապազուն Բյուրասպ Աժդահակի մասին, որն իր սրտի բոլոր գաղտնի ու չար խորհուրդները հայտնի էր անում, ու այնքան վատ գործեր է անում, որ մարդիկ հալածում են նրան: Հիշեցնենք, որ ըստ Խորենացու՝ Աժդահակը Երվանդյան Տիգրան արքայի քրոջ՝ Տիգրանուհու ձեռքն է խնդրել, ու դեռ դպրոցից հայտնի պատմությունը կհիշեք, որ Տիգրանուհին հետագայում կանխում է Աժդահակի դավաճանությունը եղբոր հանդեպ, Տիգրանը սպանում է Աժդահակին, ապա եւ նրա նախկին կնոջը՝ Անույշին, ու նրա մոտ տասը հազար վիշապազուն հարազատ-ընդոծիններին բնակեցնում Մասիսի վիհից ներքեւ, Գողթն գավառի սահմանին, Նախճավան ամրոցի դիմաց: Եվ ընդհանրապես՝ հին հայկական հավատալիքներով Մասիսի վրա օձեր էին բնակվում:**

**Մյուս պատմությունը՝ որ Հայոց արքա Արտաշեսի ալան կին Սաթենիկը տենչում էր վիշապազուն, Մարաստանի (մար՝ օձ, Մարաստան օձերի երկիր է նշանակում) թագավոր Արգավանին (նկատի ունեցեք՝ դեպքերը կատարվում են քաղաքակրթության օրրան շումերների երկրի տարածքում, ում նախնիները ըստ այդ ֆիմերի անունակներն են): Ի վերջո Արտաշեսը պատժում է Արգավանին դավաճանության համար, խլում նրա Տանդու հարճին, իսկ ավելի ուշ Արտաշեսի որդի Արտավազդը կոտորում է բոլոր վիշապազուններին՝ սպանելով նաեւ Արգավանին:**

**Իսկ ընդհանրապես՝ թեւավոր վիշապների մասին լեգենդներ բոլոր ժողովուրդները ունեն, եւ Աստվածաշնչում եւս մարդկանց դրախտում գայթակղողը վիշապը կամ օձն է, որոշ լեգենդներում աստվածաշնչյան Լիլիթը պատկերվում է մարդկային գլխով եւ վիշապի մարմնով:**

**Սակայն վերադառնանք ինտերնետ եւ շարունակենք ֆիլմ-միստերիաներ (մենք կասեինք՝ հիստերիաների) շարքը, որոնք պնդում են, թե համաշխարհային հարստություններին տիրապետող ռեպտիլոիդ դինաստիաները տարբեր գործիքներով իրենց կամքն են թելադրում ողջ աշխարհին, ինֆորմացիոն մանիպուլյացիաներով թաքցնում իրականությունը: Նրանք ամեն ինչով իբր պատրաստ են ե՛ւ աշխարհի վերջին աղետներին, ե՛ւ միջուկային պատերազմին, քանի որ իրենց համար վաղուց ստեղծել են ստորգետնյա քաղաքներ, ինչպես որ մարդիկ արել են նախորդ «աշխարհի վերջի» ժամանակ, այդ քաղաքներն ապահովված են ամեն ինչով եւ այնտեղ պետք եղած ժամանակ կպատսպարվեն ընտրյալները: Իսկ ողջ մարդկության հետն էլ անիծած: Ի դեպ, ֆիլմերը բերում են անցյալներից գետնի տակ առկա բնակավայրերի վկայություններ, ընդ որում՝ ֆիլմերից մեկը պատմում է Կապադովկիայի տարածքում գետնի տակ հայտնաբերված բնակավայր-լաբիրինթոսի օրինակը, որի մասին իմացել են բնիկ ժողովուրդները նույնիսկ մինչեւ ուշ ժամանակները (մինչեւ մեկ դար առաջ այնտեղ հայեր են ապրել, իսկ ավելի վաղ այս տարածքում շումերական պետությանը ենթակա տարածքներ են եղել): Անգամ Հիտլերի հրամանով գերմանական գիտական արշավախումբը պատերազմի տարիներին Էլբրուսի վրա փնտրել է ստորգետնյա հնագույն բնակավայրի մուտքը:**

**Ուրիշ ֆիլմեր կասկածում են՝ կկործանվի՞ աշխարհը, թե՞ ոչ, սակայն որ մարդու համար որակապես նոր ժամանակաշրջան է սկսվում տասներկու թվից հետո՝ դա ֆիլմերի մեծամասնության համար կասկածի առարկա չէ. մարդու ուղեղի նոր հնարավորություններ կբացվեն եւ կօգտագործվեն, կսկսեն ծնվել նոր տեսակի մարդիկ՝ անհավատալի բարձր հնարավորություններով, ընդհանրապես՝ մտածողությունը կփոխվի:**

**Ֆիլմերի բազմաթիվ շարքեր կան կործանված քաղաքակրթությունների մասին, որոնց գլխավոր միտքն այն է, որ երկրի վրա մերն առաջին քաղաքակրթությունը չէ, աշխարհի վերջը կրկնվել է արդեն մի քանի անգամ, ու ֆիլմեր կան հայտնաբերված հնագույն քարտեզի մասին, որտեղ Անտարկտիդան որպես մայրցամաք նշված է ամենայն մանրամասնությամբ, բոլոր ափային գծերով, որպես բնակելի տարածք, ինչը հնարավոր էր միայն այն դեպքում, երբ այն սառցապատ չլիներ, ու մարդկությունը տիրապետեր բարձր գիտելիքների, մինչդեռ Անտարկտիդայի սառույցը կա արդեն հազարամյակներ: Անտարկտիդայի, Ատլանտիդայի, եգիպտական բուրգերի ու աշխարհի վերջի ու անունակների կապերը փնտրող բազմաթիվ տեսաֆիլմեր կան, կան այնպիսիք, որոնք սովորեցնում են՝ ինչպես փրկվել աշխարհի վերջից (ծիծաղե՞նք, թե՞ լանք), պատմում, թե ինչպես են թաքցվում մարդկանցից իսկական գիտության նվաճումները եւ արտերկրյա քաղաքակրթությունների հետքերը:**

**Վերջին քսան տարին, այսպիսով, մի շրջան է, որի ընթացքում բոլոր գաղտնի բաներն ակնհայտ են դառնում, միաժամանակ մարդկանց գլուխները լցնում են կեղծ տեսություններով, վախերով ու ներշնչանքներով, եւ չկա մի ուղեցույց, մի հանձնարարական, որը կփրկի մարդուն կեղծն իսկականի տեղ ընդունելուց, ու չխաբվելու միակ երաշխիքը մարդու կրթությունն է:**

**Մենք պատմեցինք ինտերնետը հեղեղած ֆիլմերի շատ փոքր մասի թեմաները: Ֆիլմերի մեծ մասը մարդկությանը նախազգուշացնում է այս տարվա վերջին սկսվող եւ տասնյակ տարիներ տեւելիք աշխարհի վերջի վերաբերյալ իրադարձություններից, ընդ որում դրանց մասին վկայությունները գտնելով մայաների օրացույցում, շումերական լեգենդներում (վերծանված սալիկներ) ու պահպանված քանդակներում, եգիպտական բուրգերում, Նասկայի պատկերներում, նյութական մշակույթի բազմաթիվ նմուշներում: Իսկ թե այս բոլորն արվում է ՝ մարդկությանը շեղելու համար շատ կարեւոր իրադարձությունների եւ պրոբլեմների վերաբերյալ լուծումներ եւ ելքեր մտածելուց, մարդկանց լայն շերտերին ինչ-որ պատճառով վախի մեջ պահելու, պարտադրելու համար նոր, մեկ կենտրոնից կառավարվող աշխարհակարգ, չգիտենք: Ու ճիշտն ասած՝ մենք բոլորս այս ժամանակի մեջ ենք ապրում ու շատ շուտով ականատեսն ենք դառնալու այս բոլորի իրականություն դառնալուն կամ փլուզմանը, իսկ պատերազմների ու կատակլիզմների հերթագայության վերաբերյալ արժե մտորել: Մենք ուղղակի մեր պարտքը համարեցինք փոխանցել ինտերնետի հիստերիայի մի փոքրիկ ուղղվածությունը՝ ելնելով նրանից, որ մեր հասարակությունը շատ է ներհայեցված իր տեղական մանր խնդիրների, իր չեղած քաղաքական կյանքի վրա եւ մի տեսակ չի ուզում վիզը երկարել՝ այլ բաներ տեսնելու համար: Իսկ լեգենդ, թե իրականություն՝ մտածեք ինքներդ, փորփրեք եւ ստացեք պատասխանը, սա էր մեր ցանկությունը, եւ բոլորովին չենք ուզենա տարանջատել իրականությունը միֆից, արեք դա ինքներդ:**

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հուժկու պայթյուն Դամասկոսում



Դամասկոսում երեկ առավոտյան Damas Rose հյուրանոցից ոչ հեռու, ռազմական տեխնիկայի ավտոկայանատեղում տեղի է ունեցել հուժկու պայթյուն: Հյուրանոցում բնակվում են ՄԱԿ-ի դիտորդներ: Զոհվել է 3 մարդ: Հյուրանոցի շենքը աննշան վնասվածքներ է ստացել: Հարեւան շենքերում փշրվել են ապակիները, վնասվել պատերը, հրդեհներ են բռնկել, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Ռումբը դրված է եղել հյուրանոցի եւ կայանատեղի միջեւ կանգնեցված բենզատար ավտոմեքենայի մեջ: Իշխանությունները չեն բացառում, որ ահաբեկիչների թիրախը եղել են ոչ թե ՄԱԿ-ի աշխատակիցները, այլ հենց զինվորականները:

Ավելի վաղ «Ալ Արաբիա» հեռուստաալիքը հաղորդել էր Սիրիայի մայրաքաղաքում տեղի ունեցած մի շարք պայթյունների մասին: Մասնավորապես ընդդիմադիր «Սիրիական ազատ բանակի» ներկայացուցիչները հայտարարել էին, թե իրենց կազմակերպած պայթեցումը ավերել է կառավարական բանակի գլխավոր շտաբի շենքը: Սակայն այս տեղեկությունը ուրիշ աղբյուրներից չէր հաստատվել:

Դամակոսի ահաբեկչությունը համընկավ Սաուդյան Արաբիայում անցկացվող Իսլամական համագործակցության կազմակերպության գագաթաժողովին, որի մասնակիցների մեծամասնությունը հանդես է գալիս կազմակերպությունում Սիրիայի անդամակցությունը կասեցնելու օգտին:

Վերջին 2 ամիսներին Դամասկոսում զգալիորեն ավելացել է ահաբեկչությունների թիվը: Հուլիսի կեսերին տեղի ունեցած խոշոր ահաբեկչության հետեւանքով Ազգային անվտանգության ծառայության շենքում զոհվեցին պաշտպանության նախարար, գեներալ Դաուդ Ռաջիան, ներքգործնախարար Մուհամմեդ աշ Շաարը, ուրիշ բարձրաստիճան պաշտոնական անձինք:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հումանիտար հարցերի գծով տեղակալ Վալերի Ամոսը, որը ներկայումս գտնվում է Սիրիայում, հայտարարել է, որ երկրում պարենի, ջրի եւ դեղորայքի պակաս է զգացվում:

Սիրիայում իշխանությունների եւ ընդդիմության զինված հակամարտությունը շարունակվում է 2011-ի մարտից: ՄԱԿ-ի տվյալներով, անցած ժամանակամիջոցում սպանվել է ավելի քան 16 հազար մարդ, տասնյակհազարավոր մարդիկ վիրավորվել են: Հորդանանում, Իրաքում, Լիբանանում եւ Թուրքիայում ապաստանած փախստականների թիվը հասել է 158 հազարի: Սիրիայում տեղահանված անձանց թիվը մոտավորապես 1 միլիոն 200 հազար է:

Պ. Ք.

ԿԱՀԻՐԵ

# Մուրսին կվերանայի եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը

**Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսին ուսումնասիրում է 1979 թ. եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագրում փոփոխություններ կատարելու հնարավորության հարցը, գրում է «Ալ Մասրի ալ Յոում» թերթը:**

**Մուրսիի իրավաբանական հարցերի գծով խորհրդական Մուհամմեդ Գադալլահը պատմել է, որ նախագահն ուզում է երկրի ինքնիշխանությունն ապահովել «Սինայի թերակղզու յուրաքանչյուր սանտիմետրի վրա»: Երկկողմ հաշտության պայմանագրի համաձայն, Եգիպտոսը իրավունք չունի զորք տեղաբաշխելու Սինայի թերակղզում:**

**Նման պայմաններում վերջին տարիներին թերակղզում հիմնավորվել են զանազան ահաբեկչական խմբավորումներ, որոնք չեն վախենում տեղական ոստիկանությունից: Գրոհայինները արդեն մի քանի անգամ պայթեցրել են այն գազամուղը, որով Եգիպտոսը գազ է արտահանում Հորդանան եւ Իսրայել: Բացի դրանից, անցած շաբաթ նրանք հարձակվեցին եգիպտացի սահմանապահների վրա եւ սպանեցին նրանցից 16-ին: Իսրայելի թույլտվությամբ Եգիպտոսը զորք մտցրեց Սինայի թերակղզի, որտեղ ոչնչացվեցին երկու տասնյակ ահաբեկիչներ: Իշխանությունների գնահատումների համաձայն, թերակղզու ապառազմականացված գոտում ներկայումս կան մոտ 2000 իսլամիստ արմատականներ եւ ահաբեկիչներ:**



**Եգիպտացի դիտորդները կարծում են, որ գրոհայիններից թերակղզին հնարավոր է մաքրել միայն բանակի միջամտությամբ, սակայն այնտեղ Եգիպտոսի ռազմական ներկայությունը հակասում է հաշտության պայմանագրին:**

**Սինայի թերակղզու ապառազմականացված կարգավիճակին վերջ դնելու Մուրսիի մտադրությունը մտահոգում է Իսրայելի իշխանություններին, քանի որ Մուրսին ինքը «Մուսուլման եղբայրներ» շարժման նախկին ներկայացուցիչ է, իսկ այդ կազմակերպությունից սերում են իսլամիստ արմատականների մի շարք խմբավորումներ, մասնավորապես՝ «Համաս» շարժումը:**

# Արգենտինայում դատում են նախկին նախագահին

**Բուենոս Այրեսում երեկ սկսվել է Արգենտինայի նախկին նախագահ Ֆեռնանդո դե լա Ռուայի դատավարությունը, հաղորդում է La Nacion թերթը: Նա մեղադրվում է 2000 թվականին հակաժողովրդական աշխատանքային բարեփոխման անցկացման նպատակով սենատորներին կաշառած լինելու մեջ: Նոտիսիաս գործակալության տվյալներով, սենատորների կաշառման գումարը կազմել է 5000 դոլար:**

**Քննիչները կարծում են, որ նախկին նախագահը սենատորներին կաշառել է հանուն աշխատանքային նոր օրենսդրության հաստատման, որը աշխատողներին զրկում էր մի շարք իրավունքներից: BBC-ի տվյալներով, վերափոխումներն իրականացվում էին այն նպատակով, որպեսզի երկիրը վարկ ստանա ԱՄՀ-ից, իսկ վերջինս պահանջել էր կրճատել պետական հատվածը:**

**Նախկին նախագահից բացի, մեղադրյալների աթոռին են հայտնվել յոթ նախկին պաշտոնյաներ: Խոսքը Արգենտինայի SIDE հետախուզական գերատեսչության նախկին ղեկավար Ֆեռնանդո դե Սանտիբանյեսի, աշխատանքի նախարար Ալբերտո Ֆլամարիկեի, խորհրդարանի քարտուղար Մարիո Պոնտակասոյի, ինչպես նաեւ չորս սենատորների մասին է:**

**BBC-ն նշում է, որ դատավարությանը մասնակցում են 300-ից ավելի վկաներ: Նրանցից մեկը երկրի ներկայիս նախագահ Քրիստինա Կիրշներն է, որը 2000 թվականին Սենատի անդամ էր: Այն ժամանակ նա քվեարկել էր բարեփոխման դեմ:**

**Սպասվում է, որ դատավճիռը կկայացվի 2013-ից ոչ շուտ: Ֆեռնանդո դե լա Ռուան Արգենտինայի նախագահի պաշտոնը զբաղեցրել էր 1999-2001 թթ.: Նա ստիպված հրաժարական էր տվել բողոքի զանգվածային ելույթներից հետո, որոնց պատճառը աշխատատպայմանների խստացումն էր: Ընդունումից քիչ ժամանակ անց աշխատանքային բարեփոխումը չեղյալ էր հայտարարվել:**

# Հնդկական արբանյակը Մարս կթռչի 2013-ին

Հնդկաստանը մտադիր է Մարսի շուրջը պտտվող արբանյակ արձակել այդ մոլորակի կլիման եւ երկրաբանությունն ուսումնասիրելու նպատակով: Այդ մասին երեկ հայտարարել է վարչապետ Մանմոհան Սինգհը Հնդկաստանի անկախության օրվան նվիրված իր ելույթում: Նա ընդգծել է գիտության եւ տեխնոլոգիայի ասպարեզում այդ ձեռնարկման կարեւորությունը:

Ֆրանսպրեսը նշում է, որ սա նոր փուլ է Հնդկաստանի տիեզերական հետազոտությունների ծրագրում, որը նաեւ նախատեսում է 2016-ին հնդիկ տիեզերագնացի թռիչքի իրականացում: Տիեզերանավը պետք է արձակվի Անդհրա Պրադեշի նահանգում գործող տիեզերական հետազոտությունների կենտրոնից:

Դեպի Մարս արբանյակի արձակման մոտավոր ժամկետը 2013-ի նոյեմբերն է: Նախագիծը կարժենա 4-5 մլրդ ռուփի (70-90 մլն դոլար): Պրես Տրաստ օֆ Ինդիա գործակալության տվյալներով, այս տարվա մարտին կառավարության բյուջեում այդ նպատակով արդեն կուտակված էր 1,25 մլրդ ռուփի:

# «Արաբական գարունը» ի չիք դարձրեց Թուրքիայի...

*1-ին էջից*

**1980-ական թթ. արաբներին ընդառաջ քայլեր կատարեց վարչապետ Օզալը, որոնց հիմքում էլ «Արեւմուտքում Թուրքիային արժեւորելու համար տարածաշրջանում նրա ազդեցությունն ուժեղացնելու» մտայնությունն էր, ինչին տեղյակ էին արաբները, մանավանդ որ Թուրքիան զուգահեռաբար ռազմական համագործակցության պայմանագրեր էր կնքում Իսրայելի հետ:**

**Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունը վերանայեց հարաբերությունները տարածաշրջանի երկրների, Իրանի եւ մասնավորապես Սիրիայի հետ: Թուրքիան այս երկրների հետ վերացրեց վիզային ռեժիմը, ազատ առեւտրի համաձայնագրեր ստորագրեց: Դրանցից կարեւորագույնը, ինչ խոսք, Եգիպտոսն է, որը 1998-ին Թուրքիային հաշտեցրել էր Սիրիայի հետ: Արաբական աշխարհում զբաղեցրած տեղն ու դերը գրավելու համար Էրդողանը Գազայի նկատմամբ «հոգատարությամբ» սկսեց նեղել Եգիպտոսին: Նա օգտագործեց վերջինի սերտ հարաբերությունները ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ, միաժամանակ ճնշում գործադրեց, որ բացի Գազայի արտաքին աշխարհ դուրս գալու միակ միջոցը հանդիսացող Ռաֆա սահմանադուռը:**

**Նման իրավիճակում տրամաբանական է, որ Եգիպտոսը, լինելով մոդել արաբական աշխարհի համար, միանգամայն հակադրվեր Թուրքիայի տարածաշրջանային գերտերության հավակնություններին: Խոսքը Մուբարաքի վարչակարգի մասին է: «Մուսուլման եղբայրների» առաջադրած նորընտիր նախագահ Մուհամմեդ Մուրսին առավել եւս պիտի հակադրվի, որովհետեւ Եգիպտոսում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելուց զատ, որոնք լուրջ ներդրում են ժողովրդավարության ճանապարհին, դեռ հայտարարում է, որ իր տեղակալներից մեկը լինելու է կին, իսկ մյուսը՝ ղպտի, այսինքն՝ քրիստոնյա: Այլ կերպ, նա ապարեզ է իջնում «չափավոր իսլամի» ինքնատիպ դրսեւորումներով, որոնցով Վաշինգտոնին էր ներկայանում Էրդողանի կառավարությունը:**

**Խնդիրը սակայն Վաշինգտոնը չէ, այլ դիմադրության շարժումներ, որոնցից «Համասը», որքան էլ Էրդողանի կառավարությունը հրաժարվի վերջինին համարել ահաբեկչական կազմակերպություն, ընդ որում՝ Իսրայելին եւ ԱՄՆ-ին հակադրվելու գնով, շարժման ղեկավարներից Խալիդ Մաշալին հյուրընկալի Անկարայում, տարածաշրջանում «Արաբական գարնան» սկզբնավորմանը զուգընթաց պաղեստինյան հիմնահարցում «Համասը» նախընտրեց ապավինել Կահիրեի աջակցությանը եւ անտեսեց Անկարային: Ինչ վերաբերում է «Հզբոլլահին», թեեւ վարչապետ Էրդողանը Լիբանանում հանդիպեց կազմակերպության ղեկավարների հետ, սակայն նրանց առաջնորդ Նասրալլահը աննպաստ մնաց որդեգրած իրանամետ դիրքորոշման մեջ:**

**«Համասի» եւ «Հզբոլլահի» այս մոտեցումը ցույց տվեց, որ նրանք չեն վստահում Թուրքիային, ոչ էլ կվստահեն, քանի դեռ վերջինը էապես չի վերանայել իր հարաբերությունները Արեւմուտքի հետ:**

**Տարածաշրջանի կարեւորագույն երկրորդ երկիրը Սիրիան է: Թուրքիան վերջինի հետ ուներ դեռեւս 1938-ից եկող Ալեքսանդրետի սանջակի խնդիր, 1957-ին սկսեց սպառնալ, ապա առաջացան Եփրատի եւ Տիգրիսի հիմնախնդիրներն ու 1998-ի PKK-ի առաջնորդ Օջալանի շուրջ ծավալվող հակամարտությունը:**

**«Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը, գալով 2002-ին իշխանության, միանգամայն թուլացրեց Սիրիայի հետ լարվածությունը: Մանավանդ, որ քրդերից զատ Թուրքիայի համար խնդիր էր դարձել նաեւ Իսրայելը: Ավելին, Սիրիայի հետ Թուրքիայի մերձեցումը այն աստիճանի էր հասել, որ վարչապետ Էրդողանն ու նախագահ Ասադը ընտանիքներով միասին էին անցկացնում ամառային արձակուրդը: «Արաբական գարունը», սակայն, կտրուկ փոխեց հարաբերությունների ընթացքը: Էրդողանը սկսեց սպառնալ Սիրիային՝ ամեն կերպ ջանալով Ասադի վարչակարգի տապալմանը, ապաստան տվեց եւ սիրիական սահմանի երկայնքով տեղակայեց ազատ Սիրիայի այսպես կոչված բանակին: Այսպիսով, թուրք-սիրիական մեղրամիսը ավարտվեց կատաղի թշնամանքով:**

**Այդ ընթացքում մթագնեց տարածաշրջանում Թուրքիայի համար Էրդողանի հակաիսրայելական ելույթներով ստեղծված բարենպաստ մթնոլորտը: Արաբական քաղաքացիական հասարակություններում այդ ելույթներն սկսեցին պայմանավորվել նոր օսմանիզմով, Եվրոմիության աչքում արժեւորվելու եւ ԱՄՆ-ին սիրաշահելու թուրքական նկրտումներում: ՆԱՏՕ-ի հակաօդային պաշտպանության համակարգի տեղակայումը Մալաթիայում վերջնականապես համոզեց արաբներին, որ Թուրքիան չի հեռանա Արեւմուտքից, նա ունի հանձնակատարի կարգավիճակ, հետեւաբար չպետք է առանցքային դեր ստանձնի տարածաշրջանում, ոչ էլ դառնա տարածաշրջանային գերտերություն:**

**Թուրքիան չի համապատասխանում տարածաշրջանային գերտերության չափանիշներին: Նրա դերակատարումը տարածաշրջանում սահմանափակվում է Արեւմուտքի հանձնակատարությամբ: Առհասարակ հանձնակատարները առաջնորդ չեն դառնում եւ որպես կանոն նրանց առաջնորդության հետ, անկախ միջազգային ուժերի ձգտումներից, ոչ էլ համակերպվում են տարածաշրջանի երկրները:**

# Մարզական

## Քննությունից առաջ ստուգարքը չհանձնեցին

Ֆուտբոլի 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի մեկնարկից առաջ Հայաստանի հավաքականի վերջին փորձամրցումը չստացվեց: Մարտական կազմով խաղադաշտ դուրս եկած մեր ընտրանին 1:2 հաշվով զիջեց Բելառուսի հավաքականին, որի կազմում բացակայում էին առաջատար մի քանի ֆուտբոլիստներ: Այս անգամ մեր ֆուտբոլիստների գործողություններում պակասում էր ագրեսիվությունն ու դիպուկությունը, որը հատուկ էր նրանց Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի հանդիպումներում: Եվ հենց դա էլ պարտության գլխավոր պատճառ դարձավ: Ինչպես հաճախ է պատահում, գործեց ֆուտբոլում չգրված օրենքը. դու չես խփում, քեզ են խփում:



Ասվածի վառ վկայությունն առաջին խաղակեսում ծավալված գործողություններն էին: Երբ մեր ֆուտբոլիստներին հաջողվում էր արագ գրոհներ կազմակերպել, անմիջապես սպառնալից պահեր էին ստեղծվում մրցակցի դարպասին: Սակայն ցավոք մերոնք չկարողացան իրացնել գոլային պահերը: Նախ Մարկոսի հարվածը դիպավ դարպասաձողին, այնուհետեւ հյուրերի դարպասապահը հրաշքով հետ մղեց Գեւորգ Ղազարյանի հուժկու հարվածը: Մինչեւ ընդմիջում կարող էր աչքի ընկնել նաեւ Արաս Օզբիլիսը, սակայն նա էլ հարմար դիրքից վրիպեց: Իսկ ահա հյուրերն օգտվելով մեր պաշտպանների անփույթ խաղից, 44-րդ րոպեին Բրեսանի դիպուկ հարվածով բացեցին հաշիվը:

Ցավոք 2-րդ խաղակեսում մեր հավաքականի գրոհների թափն ավելի նվազեց. որոշ ֆուտբոլիստների մոտ զգալ տվեց հոգնածությունը: Իսկ բելառուսները շուտով 2-րդ գոլը խփեցին: Կրկին աչքի ընկավ Բրեսանը: Թեեւ 73-րդ րոպեին Յուրա Մովսիսյանին վերջապես հաջողվեց կրճատել հաշվի տարբերությունը, սակայն պարտությունից խուսափել մեր հավաքականին չհաջողվեց:

Իհարկե, ընկերական հանդիպումներում արդյունքն այնքան էլ չի կարեւորվում: Ավելի կարեւոր է խաղի որակը, որն այս անգամ չգոհացրեց ֆուտբոլասերներին: Սակայն չպետք է վհատվել, այլ հարկավոր է պարտությունից ճիշտ հետեւություններ հանգել: Հուսանք, որ մեր ֆուտբոլիստներն այլ տրամադրվածությամբ խաղադաշտ դուրս կգան Մալթայի հավաքականի հետ խաղում ու ընտրական մրցաշարի մեկնարկը հաղթանակով կնշանավորեն:

## «Զվարթնոցում» դիմավորեցին հայ օլիմպիականներին

Օգոստոսի 14-ի ուշ երեկոյան Լոնդոնից Երեւան վերադարձավ Հայաստանի օլիմպիական պատվիրակության վերջին խումբը, որի թվում էին 30-րդ ամառային օլիմպիադայի հայ մրցանակակիրները: «Զվարթնոց» օդանավակայանում նրանց դիմավորելու էին եկել դհոլ-զուռնայով, «Կեցցես Հռիփսիմե», «Սեւան» գյուղական կամավոր մարզական ընկերությունը եւ Քասախի մարզադպրոցը շնորհավորում են Հռիփսիմեին», «Գյումրին ողջունում է օլիմպիական արծաթե մեդալակիր Արսեն Ջուլֆալակյանին», «Արթուր Ալեքսանյանի ոսկեփայլ բրոնզե մեդալը» մակագրություններով ցուցապաստառներով:




Հարազատների հետ ողջագուրումներից ու շնորհավորական խոսքերից հետո, նման ջերմ ընդունելությունից մի փոքր հուզված մեր օլիմպիական մրցանակակիրները հայրենի հողի վրա լրագրողների հետ կիսվեցին իրենց տպավորություններից:

**Հռիփսիմե Խուրշուդյան**-Անչափ երջանիկ եմ: Սա իմ կյանքի ամենաերջանիկ պահն է: Աննկարագրելի զգացում ունեմ: Զգում էի, որ լավ արդյունք եմ ցույց տվել, մեդալ եմ նվաճել, լավ բան եմ արել մեր ազգի համար, սակայն մինչեւ այս պահը չէի գիտակցում դրա կարեւորությունը: Սա իրական երջանկություն է: Հանուն այս ապրումների արժեր այդքան դժվարություն ու պարտականություն ուսերիդ կրել:

**Արսեն Ջուլֆալակյան**-Հունահռոմեական ոճի մեր հավաքականի 4 անդամներով մեկական արծաթե եւ բրոնզե մեդալ պարգեւեցինք Հայաստանին: Փառք Աստծո, մեր հավաքականը պատվով հաղթահարեց այս փորձությունը եւ փայլեց ամբողջ աշխարհում: Իհարկե, կարող էինք նաեւ ավելին անել: Կարծում եմ, դա մեզ կհաջողվի 4 տարի անց՝ Ռիո դե Ժանեյրոյում, որտեղ կաշխատեմ ոսկե մեդալ նվաճել: Անչափ ուրախ եմ իմ եւ թիմակիցներիս հաջողության համար: Շնորհավորում եմ մեր ազգին, շնորհակալ եմ մեծ աջակցության համար:



**Արթուր Ալեքսանյան**-Դժվար է վերլուծել այն ամենն, ինչ արեցի գորգի վրա, ինչին արժանացա պատվո հարթակում: Այժմ դժվարությունները մնացել են հետեւում: Ճիշտ է, ինքս իմ արդյունքից գոհ չեմ, բայց այն, ինչ տեսա այստեղ, ինձ համոզեց, որ զուր չէր թափած քրտինքս: Սա հաղթանակ է, որն ուրախացրել է բազմահազար մարզասերներին: Այս ամենն ինձ անչափ ուրախություն պարգեւեց:

Լրագրողների հետ կիսվեց նաեւ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը. «Թիմային աշխատանքի շնորհիվ Լոնդոնի օլիմպիական խաղերում մենք բարելավեցինք մեր արդյունքները: Ճիշտ է, մեդալների քանակը քիչ էր, բայց արծաթը բրոնզից բարձր է: Սեպտեմբերին կհրավիրվի ֆեդերացիաների նախագահների եւ մարզիչների համատեղ համաժողով, որտեղ նրանք կներկայացնեն իրենց հաշվետվությունները: Դրանց հիման վրա կձեռնարկվեն կոնկրետ քայլեր: Շատերի համար այդ քայլերը ցավալի կլինեն: Պետք է աշխատենք, որ մեդալների գույնը փոխենք: Այն մարդիկ, ովքեր իրենց աշխատանքը թերի են կատարել, հրաժարական կտան»:

Ի դեպ, այս անգամ օլիմպիականներին դիմավորողների մեջ չէր ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը:

ՇԱԽՄԱՏ

## Միակ պարտությունը ճակատագրական էր Տեր-Սահակյանի համար

**Աթենքում վերջնագիծը հատեց շախմատի մինչեւ 20 տարեկանների աշխարհի հերթական առաջնությունը: Մեդալի հավակնորդ Սամվել Տեր-Սահակյանը ցավոք անհաջող անցկացրեց առաջնության վերջին 2 տուրերը, որի պատճառով զրկվեց մրցանակային տեղից:**

**12-րդ տուրում հայ շախմատիստը մրցում էր առաջատարներից մեկի՝ Ռիչարդ Ռապորտի հետ: Սպիտակներով խաղացող Սամվելին չհաջողվեց հաղթել, այլապես շատ իրական կլինեին մեդալ նվաճելու նրա հնարավորությունները: Գրանցվեց ոչ-ոքի: Մյուս առաջատարը՝ Ալեքսանդր Իպատովը եւս հաշտություն կնքեց Յի Վեյի հետ: Այսպիսով, վերջին տուրից առաջ 9,5-ական միավորով աղյուսակը գլխավորում էին Ռիչարդ Ռապորտն ու Ալեքսանդր Իպատովը, իսկ Սամվել Տեր-Սահակյանն ու Լիրեն Դինգն առաջատարներից հետ էին մնում կեսական միավորով:**

**Ավարտական տուրում Սամվել Տեր-Սահակյանը սեւերով մրցեց Յարոսլավ Ժերեբուխի հետ: Պարտիան անհաջող դասավորվեց հայ շախմատիստի համար, որը պարտվեց: Դա մրցաշարում հայ պատանի շախմատիստի առաջին պարտությունն էր, որը ճակատագրական եղավ նրա համար՝ զրկելով մեդալից: Սամվելը 9 միավորով գրավեց 6-րդ տեղը:**

**Երկու առաջատարներն էլ իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Ռիչարդ Ռապորտը ոչ-ոքի խաղաց Լիրեն Դինգի հետ, իսկ Ալեքսանդր Իպատովը միավորը կիսեց Ալեքսանդր Շիմանովի հետ մրցավեճում: Երկու շախմատիստներն էլ վաստակեցին 10-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով չեմպիոն հռչակվեց Ալեքսանդր Իպատովը:**

**Ավարտական 2 տուրերում անհաջող խաղացին նաեւ Հայաստանի մյուս երկու շախմատիստները՝ Վահե Բաղդասարյանն ու Կարեն Գրիգորյանը: Վահեն պարտություններ կրեց Անդրեաս Հեյնմանից եւ Ուլվի Բաջարանիից, իսկ Կարենը զիջեց Էրիկ Հանսենին ու Միխայիլ Անտիպովին: Մեր 2 շախմատիստներն էլ վաստակեցին 7-ական միավոր: Կարենը գրավեց 41-րդ տեղը, Վահեն՝ 49-րդը:**

**Կանանց մրցաշարում համեստ արդյունքի հասավ Շուշանիկ Սարգսյանը: Նա էլ վերջնագծում ձախողվեց՝ պարտվելով Հաննա Կլեկին ու Կարդելեն Կեմհանին: Հայ շախմատիստուհին 5,5 միավորով գրավեց 49-րդ տեղը: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսի համար թեժ մրցապայքար էր ծավալվել: Ի վերջո 4 շախմատիստուհիներ վաստակեցին հավասար՝ 9,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով աշխարհի չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ չինացի Քսյի Գուոն: 2-րդ տեղը գրավեց բելառուս Նաստասիա Զիազյուլկինան, բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Անաստասիա Բոդնարուկը:**

## Վարդան Մինասյանը չի գլխավորի «Կուբանը»

**«Կուբանի» գլխավոր մարզչի պաշտոնից ռումինացի մասնագետ Դան Պետրեսկուի հրաժարականից հետո մի շարք լրատվամիջոցներ լուրեր էին տարածել, որ թիմը գլխավորելու է Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը: Վերջինս ՀՖՖ մամուլի քարտուղարությանը տեղեկացրել է, որ ինքը նման տեղեկություն չունի եւ առաջին անգամ է լսում այդ մասին:**

## Փաչաջյանը հավանաբար վերադառնա Հայաստան

**Տրանսֆերային պատուհանը Եվրոպայում շուտով կփակվի, սակայն Լեւոն Փաչաջյանին առայժմ չի հաջողվում նոր ակումբ գտնել: Հիշեցնենք, որ նա հանդես էր գալիս Իրանի «Սանաթ Նավթում», որտեղ իր ելույթներն է շարունակում ՀՀ ազգային հավաքականի պաշտպան Վալերի Ալեքսանյանը: Լեւոն Փաչաջյանը տեղեկացրել է, որ հոգնել է սպասելուց եւ շատ հնարավոր է, որ օրերս պայմանագիր կնքի հայկական որեւէ ակումբի հետ:**

**Լեւոն Փաչաջյանը 2008-ին մեկնեց արտերկիր: Սկզբում նա հանդես եկավ Շվեդիայի Գյոթեբորգ քաղաքի ԳԱԻՍ թիմում, ապա տեղափոխվեց նորվեգական «Ֆրեդրիկստադ», հետագայում էլ ելույթները շարունակեց Իրանի ակումբներում:**

## Ռիկի Հատոնը մտադիր է կրկին ռինգ դուրս գալ

**Քաշային 2 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Ռիկի Հատոնը հավանաբար վերադառնա ռինգ: Պրոմոութերական եւ մարզչական գործունեությամբ զբաղվող Հատոնը մտադիր է հոկտեմբերին կամ նոյեմբերին իրեն հարազատ Մանչեսթրում կրկին ռինգ դուրս գալ: Նա արդեն սկսել է մարզվել եւ ազատվել է ավելորդ քաշից:**

**Ռիկի Հատոնը վերջին անգամ մենամարտել է 2009-ին: Մենի Պակյաոյի հետ մրցավեճում նոկաուտի ենթարկվելով, անցյալ տարի նա պաշտոնապես հրաժեշտ տվեց սիրած մարզաձեւին: Նշենք, որ Հատոնը մեծ հարգանք էր վայելում բրիտանացի մարզասերների շրջանում եւ նրա մենամարտերը մշտապես մեծ թվով հանդիսականներ էին հավաքում:**

## Մահացել է Սվետոզար Գլիգորիչը

90 տարեկանում Բելգրադում մահացել է հարավսլավացի հանրահայտ գրոսմայստեր Սվետոզար Գլիգորիչը: Մարզական իր հարուստ կենսագրության ընթացքում Գլիգորիչը բազում մրցաշարերի հաղթող ու մրցանակակիր է դարձել: Նա 1950-ին Դուբրովնիկում եւ 1958-ին Մյունխենում անցկացված շախմատի օլիմպիադաներում չեմպիոն է հռչակվել: Ընդհանուր առմամբ անվանի գրոսմայստերը շախմատի օլիմպիադաներում 13 մեդալ է նվաճել: 1958-ին Գլիգորիչը ճանաչվել է Հարավսլավիայի լավագույն մարզիկ:

Գլիգորիչը Հարավսլավիայի չեմպիոն է դարձել 12 անգամ, Եվրոպայի առաջնություններում էլ Գլիգորիչի հաշվին 4 ոսկե, 5 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ է նվաճել: Նա մասնակցել է աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդների 3 մրցաշարի:

Բացի այդ, Գլիգորիչը նաեւ եղել է շախմատի պատմության մեջ ամենաերկարատեւ մրցամարտի՝ Անատոլի Կարպովի եւ Գարի Կասպարովի մրցավեճի գլխավոր մրցավարը: Հիշեցնենք, որ 1984-85-ին կայացած այդ մրցախաղում 48 պարտիա խաղացվեց:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW 8.QXD 17/08/2012 21:49 Page 1



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Կանոնադրական կապիտալի ձեւավորման մասին

Ձեւ թիվ 10 (ամսական)

Բանկի անվանումը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 22000
Ամսաթիվը 27/01/2012թ.

Կանոնադրական հիմնադրամի հայտարարման ամսաթիվը 09/09/2006թ.
Բանկի կազմակերպական իրավական կարգավիճակը ՓԲԸ

Կանոնադրական հիմնադրամի հիմնադրման ամսաթիվը 14/04/2011թ.

[illegible]

| Հ/Հ | Բաժնետերերի (փայատերերի) լրիվ անվանումը | Ղեկավարների (խորհրդի (դիտորդ խորհրդի) նախագահ և գործադիր տնօրեն) անունը, ազգանունը, հայրանունը | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 1 | CREDIT AGRICOLE S.A. | Rene Carron, Georges Pauget | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ոչ ռեզիդենտ | 4668000 | 4668000 | | | 15.56% | 4668000 | 4668000 | | | [illegible].56% | CAIBXX [illegible] Swift AGRIFRPP [illegible] RCS Paris FR [illegible] |
| 2 | «Արմավիրի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Մանասեր Հարությունյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 4224000 | 4224000 | | | 14.08% | 4224000 | 4224000 | | | [illegible]4.08% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 220003330200000 |
| 3 | ՍԱՍ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ պարզ բաժնետիրական ընկերություն | M. Dominique LEFEBVRE | Ոչ պետական | Սովորական | 21/05/2008 | Ոչ ռեզիդենտ | 3732000 | 3732000 | | | 12.44% | 3732000 | 3732000 | | | 2.44% | CAIBXX [illegible] Swift AGRIFRPP 784608416 RCS Paris FR [illegible] |
| 4 | «Արարատի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Սարատ Հարությունյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 3684000 | 3684000 | | | 12.28% | 3684000 | 3684000 | | | 2.28% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| 5 | «Արագածոտնի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Գարուշ Գրիգորյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 2220000 | 2220000 | | | 7.4% | 2220000 | 2220000 | | | [illegible]4% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| 6 | «Լոռու Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Սամվել Վիրաբյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1992000 | 1992000 | | | 6.64% | 1992000 | 1992000 | | | [illegible].64% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 220003330069000 |
| 7 | «Շիրակի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Բագրատ Հեբեյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1980000 | 1980000 | | | 6.6% | 1980000 | 1980000 | | | [illegible]% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 220003330226000 |
| 8 | «Կոտայքի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Ֆրունզ Պողոսյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1680000 | 1680000 | | | 5.6% | 1680000 | 1680000 | | | [illegible]% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 220003331513000 |
| 9 | «Գեղարքունիքի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Խաչիկ Սահակյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1584000 | 1584000 | | | 5.28% | 1584000 | 1584000 | | | [illegible].28% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| 10 | «Տավուշի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Կամո Սարդանյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1440000 | 1440000 | | | 4.8% | 1440000 | 1440000 | | | [illegible]% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| 11 | «Սյունիքի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Արմեն Խաչատրյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1284000 | 1284000 | | | 4.28% | 1284000 | 1284000 | | | [illegible]28% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» [illegible] |
| 12 | «Վայոց Ձորի Գյուղացիական փոխօգնության Սարգային Միավորում» հասարակական կազմակերպություն | Մխիթար Վարդանյան | Ոչ պետական | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 1212000 | 1212000 | | | 4.04% | 1212000 | 1212000 | | | [illegible].04% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| 13 | Ստեփան Գիշյան | Ստեփան Գիշյան | Ֆիզիկական անձ | Սովորական | 15/10/2006 | Ռեզիդենտ | 300000 | 300000 | | | 1.0% | 300000 | 300000 | | | [illegible]% | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ [illegible] |
| | Ընդամենը | | | | | | 30,000,000 | 30,000,000 | 0 | | 100% | 30,000,000 | 30,000,000 | 0 | | 100% | |
| | այդ թվում ոչ ռեզիդենտ բաժնետերեր (փայատերեր) | | | | | | 8,400,000 | 8,400,000 | | | 28.0% | 8,400,000 | 8,400,000 | | | 28.0% | |

| | |
|---|---|
| Բաժնետերերի (փայատերերի) ընդհանուր թիվը | 13 |
| այդ թվում ոչ ռեզիդենտների | 2 |

[illegible]

| | |
|---|---|
| 1 | CREDIT AGRICOLE S.A. |
| 2 | ՍԱՍ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ պարզ բաժնետիրական ընկերություն |

*Բանկի խորհրդի նախագահ՝*

# ՕՐԱԿԱՐԳ

Ս. թ. օգոստոսի 22-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստ:

Օրակարգում՝

«Կալա Սլոս» ՍՊԸ (ՇԽ-168 լիցենզիա) շահումով խաղի կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հարցի քննարկում:

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: